

9-րդ դասարանի ավարտական քննության ուղեցույց

2011 թ. «Քիմիա» առարկայի ավարտական քննության համար որպես հիմք և սկզբնաղբյուր են ընդունվում գործող ուսումնական ծրագրերը, դպրոցական դասագրքերը և խնդրագրքերը:

1. Քննվող նյութի բաժինները

Հ/Հ	Թեմա	Մոտավոր համամասնություն (%-ով) ըստ դասաժամերի
1	Ընդհանուր քիմիա	58
2	Անօրգանական քիմիայի տարրական հիմունքները:	34
3	Օրգանական նյութերի վերաբերյալ նախնական պատկերացումներ:	8
	Ընդամենը	100

2. Թեստի կառուցվածքը և գնահատման կարգը

Թեստը ներառում է 37 առաջադրանք (40 միավոր):


1-ից 25-րդը ընտրովի պատասխանով առաջադրանքներ են, որոնցում ընդգրկված են քիմիայի առարկայական ծրագրի գրեթե բոլոր թեմաները: Ընտրովի պատասխանով առաջադրանքներից յուրաքանչյուրը կատարելու համար ընտրված պատասխանի համարը պետք է վերցնել շրջանակի մեջ և «X» նշանով նշել ձևաթղթում:

Օրինակ՝ Համապատասխանեցրեք ներկայացված ռեակցիաների հավասարումները և ռեակցիաների տեսակները:

- | | |
|--|--------------|
| 1) $2Al + 3Cl_2 = 2AlCl_3$ | ա) քայքայման |
| 2) $Ba(OH)_2 + H_2SO_4 = BaSO_4 + 2H_2O$ | բ) միացման |
| 3) $2Cu(NO_3)_2 = 2CuO + 4NO_2 + O_2$ | |
| 4) $Fe + H_2SO_4 = FeSO_4 + H_2$ | |

Ընտրեք ճիշտ պատասխանների շարքը:

- 1) 1ա, 2բ
- 2) 2ա, 4բ
- 3) 3ա, 1բ**
- 4) 4ա, 3բ



25-ից 35-րդը կարճ պատասխանով առաջադրանքներ են: Դրանց պատասխանները թվեր են: Ստացված պատասխանների միայն թվային արժեքն պետք է գրանցել ձևաթղթի համապատասխան մասում:

Օրինակ՝ Էլեկտրոնային հաշվեկշռի եղանակով հավասարեցնել նշված քիմիական ռեակցիայի սխեման՝ $Al + H_2SO_4 \rightarrow Al_2(SO_4)_3 + H_2\uparrow$

1. Որպես պատասխան նշե՛ք վերականգնիչի գործակիցը:
2. Որոշե՛ք ռեակցիայի մեջ մտած ալյումինի զանգվածը, եթե ռեակցիայի արդյունքում առաջացել է 171 գ ալյումինի սուլֆատ:

36-րդը և 37-րդը ընդարձակ պատասխանով առաջադրանքներ են:

36-րդ և 37-րդ առաջադրանքները կատարելու համար պետք է մանրամասն ու հիմնավորված ներկայացնել լուծման ողջ ընթացքը՝ պահանջվող քիմիական հավասարումներով, բանաձևերով, բոլոր քայլերի գրանցումով, հաշվարկներով և ստացված պատասխանով: 36-րդ առաջադրանքի լուծումը գնահատվում է առավելագույնը 2 միավոր (քայլը՝ մեկ միավոր), 37-րդ առաջադրանքի լուծումը գնահատվում է առավելագույնը 3 միավոր (քայլը՝ մեկ միավոր):

3. Միավորների բաշխումը

Ըստ առաջադրանքների տիպերի միավորները բաշխվում են հետևյալ կերպ.

1. ընտրովի պատասխանով առաջադրանքներ՝ 25 միավոր
2. կարճ պատասխանով առաջադրանքներ՝ 10 միավոր
3. ընդարձակ պատասխանով առաջադրանքներ՝ 5 միավոր